մագիստրանտի գիտական ղեկավարի և մագիստրանտի պարտադիր մասնակցությամբ մեկ շաբաթյա ժամկետում /առաջին շաբաթ/: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից մագիստրոսական թեզը երաշխավորվում է պաշտպանության,

- զ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում ատենախոսության վերաբերյալ գրախոսականը,
 - դ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:
5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
 6. Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
 7. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 4.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Արդիականությունը/նորույթը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6

3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
	Ընդամենը	20

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից մագիստրոսական թեզի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 4*):

12. Կրեդիտների փոխանցումը

1. Այլ բուհերից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրոսի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
2. Այլ կրթական ծրագրից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
3. Այլ բուհում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ընդունող բուհի միջև:
4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը նշանակում է ECTS-ի բուհական համակարգող, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով /անհրաժեշտության դեպքում/:

13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
 - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
 - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
 - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
 - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
 - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար

II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» ծրագրով:

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ:

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Լրացական դասընթացներ	0	2
Ընդհանուր կրթամաս	6	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	48	14
Կամընտրական դասընթացներ	18	6
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	3
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
ԸՆԴԱՄԵՆԸ	120	34

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	26	24	22	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	7	8	30	48
Ընդամենը, կրեդիտ	29	31	30	30	120

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի

ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատաձավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

2. Ծրագրի բովանդակությունը

2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) ⁸	Կիսամյակ	Գնահատման ձևը
18/M01	Մասնագիտական օտար լեզու/անգլերեն/1	0	32/0/0	I	Մտուգաբար
18/M01	Մասնագիտական օտար լեզու/անգլերեն/2	0	32/0/0	II	Մտուգաբար

⁸ Այստեղտ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատաձևավարը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Կենսաինֆորմատիկա» և «Մասնագիտության փիլիսոփայական հարցեր»:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
05/M04	Կենսաինֆորմատիկա	3	32/0/0	II	Քննություն
16/M01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	3	32/0/0	I	Քննություն

Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաձևավարը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝
«Մոլեկուլային և բջջային կենսաբանություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
08/M04	Նանոկենսատեխնոլոգիա	5	64/0/0	II	Քննություն
08/M05	Գենային ինժեներիա	5	64/0/0	II	Քննություն
08/M08	Բջջային կուլտուրաների տեխնոլոգիաներ	2	32/0/0	III	Քննություն
08/M09	Կենսաէթիկա	2	32/0/0	III	Քննություն
08/M19	Մոլեկուլային գենետիկա	3	32/0/0	I	Քննություն
08/M20	Բջջային կենսաբանություն	3	32/0/0	II	Քննություն

08/M20	Էուկարիոտների մոլեկուլային կենսաբանություն	4	32/0/0	I	Քննություն
08/M21	Նուկլեինաթթուների կառուցվածքը և ֆունկցիան	3	32/0/0	I	Քննություն
08/M23	Մոլեկուլային բժշկություն	3	32/0/0	III	Քննություն
08/M24	Գենոմիկա	3	32/0/0	III	Քննություն
08/M25	Տոքսիկոգենոմիկա	3	32/0/0	III	Քննություն
08/M26	Կենսավիճակագրություն և մոլեկուլային մոդելավորում	3	32/0/0	III	Քննություն
08/M28	Կենսաինժեներիա	5	64/0/0	II	Քննություն
08/M32	Պրոկարիոտների մոլեկուլային կենսաբանություն	4	32/0/0	I	Քննություն

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաժամայլը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաժամայլը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝

«Մոլեկուլային և բջջային կենսաբանություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
08/M03	Մոլեկուլային Էնզիմաբանություն	3	32/0/0	I	Քննություն
08/M15	Մոլեկուլաբջջային իմունաբանություն	3	32/0/0	I	Քննություն

08/M17	Բջջային ակտիվության կարգավորում	3	32/0/0	III	Քննություն
08/M21	Սպիտակուցային ինժեներիա	3	32/0/0	II	Քննություն
08/M22	Պրոտեոմիկա	3	32/0/0	II	Քննություն
08/M29	Պոպուլյացիոն գենետիկա	3	32/0/0	III	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաձևավալով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաձևավալ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաձևավալ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաձևավալ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» մասնագիտության ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M04. Կենսաինֆորմատիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2- րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է քննարկել կենսաբանական տվյալների տեսակները, այն կենսաբանական հարցերը, որոնք կապված են տվյալների հետ և ծանոթացնել հաշվարկային մոտեցումներին, որոնք ուղղված են այդ հարցերի լուծմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիրմանա** կենսաբանական տվյալների տեսակները, կենսաինֆորմատիկայի տեսական և վիճակագրական հիմունքները:

2. **կհասկանա** գիտական գրականությունում ներկայացված կենսաինֆորմատիկական մեթոդաբանությունը:

3. **կկարողանա** օգտագործել կենսաինֆորմատիկական ծրագրեր, ինտերնետային կենսաինֆորմատիկական շտեմարաններ, գիտական գրականության շտեմարաններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կենսաբանական տվյալների վերլուծություն: Մարդու գենոմի ծրագիր: **Թեմա 2**՝ Կենսաբանական հաջորդականություններ: **Թեմա 3**՝ Դինամիկ ծրագրավորում և էվրիստիկա՝ BLAST, PSI-BLAST, FASTA: **Թեմա 4**՝ Տվյալների շտեմարաններ՝ գրանցումներ, դաշտեր, ամբողջական ֆայլեր, կապեր տվյալների միջև: **Թեմա 5**՝ Կենսաբանական տվյալների շտեմարաններ: **Թեմա 6**՝ Մոլեկուլային էվոլյուցիա և ֆիլոգենետիկ վերլուծություն: **Թեմա 7**՝ Գենոմի վերլուծություն: **Թեմա 8**՝ Գեների էքսպրեսիա: Gene Set Enrichment Analysis: Կլաստերային վերլուծությունը գեների էքսպրեսիային տվյալների համատեքստում: **Թեմա 9**՝ Կենսաբանական ցանցերի մոդելավորում և վերլուծություն: **Թեմա 10**՝ Մարդու գենոմ, պոլիմորֆիզմեր: Քաղցկեղի կենսաինֆորմատիկա: Դեղերի դիզայն և ֆարմակոգենոմիկա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց,

յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր:
Միավորների քայլը 0,5 է:

16/M01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)
*Շարթթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով
դասընթաց*

Նպատակը

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կճանութանա դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

2. ձեռք կրերի մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

3. կճանութանա միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ:

Թեմա 2՝ Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: *Թեմա 3՝* Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: *Թեմա 4՝* Ռ. Դեկարտը որպես եվրոպականոացիոնալիզմի հիմնադիր: *Թեմա 5՝* Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: *Թեմա 6՝* Նեոկանտականություն: *Թեմա 7՝* Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): *Թեմա 8՝* Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեն, Պուանկարե), *Թեմա 9՝* Ամերիկյան պրագմատիզմ: *Թեմա 10՝* Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ, *Թեմա 11՝* XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: *Թեմա 12՝* Պոստպոզիտիվիզմ: *Թեմա 13՝* Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: *Թեմա 14՝* Հերմենևտիկական որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: *Թեմա 15՝* Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: *Թեմա 16՝* Լեզվի փիլիսոփայությունը: *Թեմա 17՝* Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: *Թեմա 18՝* Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01.Մասնագիտական օտար լեզու (անգլերեն)1 (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:

Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “British Studies” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կիմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկություններ Անգլիայի մասին: Անգլիական թագավորության ծագման պատմությունը: *Թեմա 2*՝ Քաղաքական հրապարակախոսության բառապաշարը, վարժություններ քաղաքական տեքստերի հիման վրա: *Թեմա 3*՝ Լոնդոնի հիմնադրման մասին պատմական ակնարկ: *Թեմա 4*՝ “Լոնդոնի տեսարժան վայրերը” տեքստը՝ բաղկացած 4 մասից: *Թեմա 5*՝ Բառակազմական և շարահյուսական վարժություններ քաղաքական հրապարակախոսության հիման վրա: *Թեմա 6*՝ Բրիտանական ավանդույթներն ու սովորությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

18/M01.Մասնագիտական օտար լեզու (անգլերեն) 2 (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:

Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է

դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “Politics and international relations” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհիմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ամերիկյան կառավարությունն ու մասսայական դժգոհությունը: *Թեմա 2*՝ Քաղաքական հրապարակախոսության բառապաշարը, վարժություններ քաղաքական տեքստերի հիման վրա: *Թեմա 3*՝ Միջազգային հարաբերությունների թեորիան: *Թեմա 4*՝ Նոր ուղղություններ ամերիկյան քաղաքականության մեջ (մաս 1-ին): *Թեմա 5*՝ Բառակազմական և շարահյուսական վարժություններ քաղաքական հրապարակախոսության հիման վրա: *Թեմա 6*՝ Նոր ուղղություններ ամերիկյան քաղաքականության մեջ (մաս 2-րդ):

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

08/M04 .Նանուկենասատեխնոլոգիա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2- րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել հետզենոմային ժամանակաշրջանի բարձր տեխնոլոգիաների շարքին պատկանող նանուկենասատեխնոլոգիայի և նրա անբաժան մասի՝ նանոբժշկության վերաբերյալ գիտելիքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- 1. կիմանա** նանուկենասատեխնոլոգիայի տեսությանը, օբյեկտներին, մշակումներին, կիրառմանը, առաջընթացներին և հիմնախնդիրներին,
- 2. կհասկանա** տվյալ բնագավառին վերաբերվող տեսական դրույթներին, մոտեցումներին և մեթոդներին,
- 3. կկարողանա** փոխանցել և կիրառել ստացված գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նանուկենասատեխնոլոգիան և նանոբժշկությունը որպես նանոտեխնոլոգիայի կարևոր բաժիններ: *Թեմա 2*՝ Կենսաակտիվ միացությունների փոխադրումը

նանոփոխադրիչների օգտագործմամբ՝ ընդհանուր սկզբունքներ, հիմնական մոտեցումներ և հեռանկարներ: **Թեմա 3՝** Նանոդեղեր, նանոպատվաստանյութեր և նանոդեղաբանական արդյունաբերություն: **Թեմա 4՝** Ֆուլերեններ, տուբուլեններ, դենդրիմերներ և նրանց կենսաբժշկական կիրառումը: **Թեմա 5՝** Նանոկենսաինժեներիա և նանոկենսահամատեղելի նյութեր: **Թեմա 6՝** Նանոտեխնոլոգիաների կիրառումը մոլեկուլային կենսաբանության, մոլեկուլային բժշկության և մոլեկուլային ախտորոշման մեջ: **Թեմա 7՝** Նանոկենսատեխնոլոգիայի անվտանգությունը, սպասվող ռիսկերը և էթիկական խնդիրները: **Թեմա 8՝** Կենսասենսորները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M05. Գենային ինժեներիա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2- րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է պատրաստել գիտական ուսումնասիրություններ կատարելու ունակ, խորը գիտելիքներով մասնագետներ, համապատասխան ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին, որոնք ունակ կլինեն գործնականում կիրառելու գենային ինժեներիայի ժամանակակից մեթոդները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** գենային կլոնավորման մեթոդները, տրանսգեն կենդանիների և բույսերի ստացման եղանակները,
2. **կհասկանա** գյուղատնտեսության, անասնաբուծության, դեղերի և սննդի արդյունաբերության մեջ գենային ինժեներիայի կիրառման առավելությունները և հնարավոր վտանգները,
3. **կկարողանա** գենետիկաբջջաբանական մեթոդների կիրառմամբ, առաջադրել և լուծել գիտահետազոտական խնդիրներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գենային ինժեներիայի ֆերմենտները: **Թեմա 2՝** Ռեատրիկտազներ: **Թեմա 3՝** Ռեատրիկցիոն քարտեզների

կառուցումը: **Թեմա 4'** Ռեկոմբինանտ ԴՆԹ-ների կառուցումը: **Թեմա 5'** Նուկլեոտիդային հաջորդականության որոշումը: **Թեմա 6'** Հիբրիդացում: **Թեմա 7'** ԴՆԹ-ի *in vivo* և *in vitro* կլոնավորումը: **Թեմա 8'** Գեների էքսպրեսիայի կարգավորումը: **Թեմա 9'** Նոր գենի ներմուծում բջջի մեջ: Վեկտորներ: **Թեմա 10'** Գենի բջջի մեջ ուղղակի ներմուծման մեթոդները: **Թեմա 11'** Գենետիկական մանիպուլյացիաներ: **Թեմա 12'** Գեների ներմուծում կաթնասունների բջիջների մեջ: Գենային թերապիա: Տրանսգեն կենդանիների ստացումը: **Թեմա 13'** Բույսերի գենային ինժեներիա: **Թեմա 14'** Ti և Ri պլազմիդներ: Տրանսգեն բույսերի կենսասանվտանգության հիմնախնդիրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M08. Բջջային կուլտուրաների տեխնոլոգիաներ (3 կրեդիտ)

Շարաթական 2 ծավ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տեսական ու գործնական գիտելիքներ կենսաբանական յուրատիպ փորձարարական համակարգերի՝ բջջային կուլտուրաների, առանձնահատկությունների և տեխնոլոգիաների վերաբերյալ, ծանոթացնել դրանց օգտագործման հետ տարբեր ոլորտներում և գիտատարտադրություններում, նաև փորձարարական կենսաբանության հիմնարար խնդիրների լուծման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1 կիմանա բջիջների *in vitro* կուլտիվացման եղանակները, բջջային կուլտուրաների առանձնահատկությունները և տեխնոլոգիաները,

2.կիսականա բժշկության, դեղագործության, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի մոնիտորինգի և արդյունաբերության տարբեր ոլորտներում բջջային կուլտուրաների օգտագործման նշանակությունը,

3.կկարողանա փոխանցել և կիրառել ստացված գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1' Բջիջների կուլտիվացման ընդհանուր մեթոդական մոտեցումները, բջջային կուլտուրաների դասակարգման

սկզբունքները և բջիջների բնութագիրը կուլտուրայում: **Թեմա 2'** Կենդանական բջիջների կուլտիվացումը: Կենդանական բջիջների առավել տարածված շտամերի և գծերի նկարագիրը: Չարոքակ բջիջների աճը կուլտուրայում: **Թեմա 3'** Կենդանական օրգանների կուլտիվացումը: Բջջային և օրգանների կուլտուրաների միջև հիմնական տարբերությունները: Մարդու օրգանների կուլտուրաների կիրառումը և դրա հետ կապված էթիկական խնդիրները: **Թեմա 4'** Բուսական բջիջների կուլտիվացումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M09. Կենսաէթիկա (2 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կենսաէթիկայի կայացման գործոնների, բժշկական էթիկայի պատմական մոդելների, կենսաէթիկական բանավեճերի հիմնական ուղղությունների հետ, կենսաէթիկական խնդիրների լուծման սկզբունքներին և կանոններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** կենսաբժշկական գիտագործնական էթիկական խնդիրները,
2. **կհասկանա** էթիկական հարցերը կարգավորող հիմնական ազգային և միջազգային իրավական փաստաթղթերի նշանակությունը,
3. **կկարողանա** վերլուծել կոնկրետ իրավիճակներում առաջացած կենսաէթիկական խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1' Կենսաէթիկա, միջդիսցիպլինար հետազոտությունների նոր բնագավառ: **Թեմա 2'** Կենսաէթիկական որպես էթիկայի կիրառական ճյուղ: **Թեմա 3'** Կենսաէթիկայի զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 4'** Հիմնական սկզբունքները և կանոնները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 5'** Մարդու վրա կատարվող կենսաբժշկական ուսումնասիրությունների էթիկական ասպեկտները: **Թեմա 6'** Կենդանիների օգտագործումը կենսա-բժշկական

հետազոտություններում: **Թեմա 7'** Օրգանների փոխապատվաստում. բարոյական խնդիրներ: **Թեմա 8'** Մարդու վերարտադրման պրոցեսների տեխնոլոգիզացիան: **Թեմա 9'** Մարդու գենետիկան և նրա զարգացման արդյունքում առաջացող բարոյական խնդիրները: **Թեմա 10'** Մահը և մահացումը ժամանակակից բժշկական տեխնոլոգիաների համատեքստում: **Թեմա 11'** Կենսաէթիկական խնդիրները կարգավորող հիմնական միջազգային փաստաթղթերը: **Թեմա 12'** Էթիկա, իրավունք, բժշկություն: **Թեմա 13'** Կենսաէթիկան և ԳՄՕ: **Թեմա 14'** Բնապահպանական խնդիրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M19. Մոլեկուլային գենետիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ ժամանակակից մոլեկուլային գենետիկայի հիմունքների վերաբերյալ: Ուսանողների մոտ զարգացնել մոլեկուլային գենետիկայի բնագավառում նորագույն տվյալների ինքնուրույն վերլուծության և նոր խնդիրներ առաջադրելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- 1. կիրանա** մոլեկուլային գենետիկական գործընթացների մոլեկուլային մեխանիզմները,
- 2. կհասկանա** մոլեկուլային գենետիկայի դերը էվոլյուցիայում և հիվանդությունների զարգացման գործընթացներում,
- 3. կկարողանա** վերլուծել մոլեկուլային գենետիկայի բնագավառում գիտական հոդվածներ և իրականացնել մոլեկուլային գենետիկական հետազոտությունների գործնական նախագծում:

Բովանդակությունը.

Թեմա 1' Ներածություն: **Թեմա 2'** Ժառանգական փոփոխականություն: **Թեմա 3'** ԴՆԹ-ի կրկնապատկում: **Թեմա 4'** Ժառանգական ինֆորմացիայի դրսևորման առաջին փուլը՝ տրանսկրիպցիա: **Թեմա 5'** Ժառանգական ինֆորմացիայի դրսևորման երկրորդ փուլը՝ տրանսլացիա: **Թեմա 6'** Ռեպարացիոն

համակարգեր և նրանց մոլեկուլային մեխանիզմները: **Թեմա 7'** Ռեկոմբինացիա *in vivo*: **Թեմա 8'** Ռեկոմբինացիա *in vitro*: **Թեմա 9'** Գենոմիկա: **Թեմա 10'** Գենային թերապիա: **Թեմա 11'** Բնային բջիջներ: **Թեմա 12'** Օնկոգենետիկա: **Թեմա 13'** Ռևոլյուցիոներֆերենցիա: **Թեմա 14'** Մոլեկուլային գենետիկայի մեթոդներ: **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M20. Բջջային կենսաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ բջջային կենսաբանության բնագավառին վերաբերվող տեսական գիտելիքներ և զարգացնել նրանց մոտ տվյալ ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու պրակտիկ հմտություններ, ներկայացնել բջջային կենսաբանության օբյեկտները, եղանակները, տեխնոլոգիաները, նորամուծությունները և նորարարական մշակումներն ու նվաճումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա բջջային կենսաբանության տեսությունը, տեսակներին, մշակումներին, կիրառմանը, առաջընթացներին և հիմնախնդիրներին:

2. կհասկանա բջջային կենսաբանության օգտագործման նշանակությունը,

3. կկարողանա փոխանցել և կիրառել ստացված գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1' Բջիջների վերաարտադրման ունակությունը: Բջիջների բաժանման ձևերը: Բջջային ցիկլը և նրա կարգավորումը: Միտոզ: Մեյոզ: **Թեմա 2'** Բջջակորիզը, գենետիկական տեղեկատվության քրոմոսոմային և արտաքրոմոսոմային աղբյուրներ: **Թեմա 3'** Կենսաթաղանթներ, բջջաթաղանթ: **Թեմա 4'** Բջիջների ծերացումը և մահը: Ծերացման ընդհանուր դրույթները: Բջջային մահվան մեխանիզմները՝ ապոպտոզ, նեկրոզ, աուտոֆագիա: **Թեմա 5'** Ցողունային բջիջներ: Բջջային թերապիա

ցողունային բջիջների միջոցով: Օրգանիզմի երիտասարդացումը ցողունային բջիջների կիրառմամբ: **Թեմա 6**՝ Բջիջների վերափոխումը և չարորակ նորոգյացումները: Կանցերոզեններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M20. Էուկարիոտների մոլեկուլային կենսաբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ էուկարիոտների ժառանգականությունը և ժառանգական տեղեկատվության փոխանցման մեխանիզմները ապահովող քիմիական միացությունների կառուցվածքի, հատկությունների և կենսաբանական դերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիրմանա** էուկարիոտների մոլեկուլային կենսաբանության հիմունքները, նրա նշանակությունը, կիրառության ոլորտները,
2. **կհասկանա** տվյալ բնագավառին վերաբերվող հիմնական սկզբունքները,
3. **կկարողանա** առաջադրել և լուծել էուկարիոտների մոլեկուլային կենսաբանության վերաբերվող գիտահետազոտական խնդիրներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էուկարիոտների մոլեկուլային կենսաբանություն առարկայի նկարագրությունը: **Թեմա 2**՝ Էուկարիոտների գենետիկական ապարատի առանձնահատկությունները: **Թեմա 3**՝ Հետազոտման մեթոդները: **Թեմա 4**՝ Գենը որպես ժառանգականության կրող: **Թեմա 5**՝ ԴՆԹ ռեպլիկացիա, ռեպարացիա: **Թեմա 6**՝ Սպիտակուցներ: **Թեմա 7**՝ Սպիտակուցի կենսասինթեզ՝ ՌՆԹ տրանսկրիպցիա և տրանսլյացիա: Մոլեկուլային կենսաբանության կենտրոնական դոգման: **Թեմա 8**՝ Ժառանգական փոփոխականություն, մուտացիա, ռեկոմբինացիա: **Թեմա 9**՝ Էպիգենետիկա: **Թեմա 10**՝ Բժշկական գենետիկա: Մարդու գենետիկայի առանձնահատկությունները: **Թեմա 11**՝ Աուտոմիկրոֆլորա, նրա դերը օրգանիզմում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

08/M21. Նուկլեինաթթուների կառուցվածքը և ֆունկցիան (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ հիմնարար հասկացություններ կենդանի օրգանիզմի ժառանգականությունը և ժառանգական տեղեկատվության փոխանցման մեխանիզմները ապահովող քիմիական միացությունների կառուցվածքի, հատկությունների և կենսաբանական դերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը..

- 1. կիմանա** կենսաապոլիմերների, նրանց բաղադրիչների ու կոմպլեքսների, գեների և գենոմների կառուցվածքն ու ֆունկցիաները,
- 2. կհասկանա** կենսագործունեության հիմնական օրինաչափությունները՝ ելնելով մակրոմոլեկուլների քիմիական կառուցվածքից,
